



## Սուտ մատնության հիմքով քրեական հետապնդումը որպես հանցագործության մասին հայտնող անձի նկատմամբ ճնշման միջոց

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում հանցագործության մասին սուտ մատնության համար, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է:

Սույն հոդվածով նախատեսված հանցագործությունը արդարադատության դեմ ուղղված հանցագործություն է, որը խաթարում է իրավապահ մարմինների բնականոն գործունեությունը, որոնք հարկադրված են լինում ուժեր ու միջոցներ վատնել չկատարված հանցագործության բացահայտման համար կամ կատարված հանցագործությունը քննելիս ընթանալ սխալ ուղիով: Սուտ մատնության հիմնական անմիջական օբյեկտը արդարադատության բնականոն իրականացմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել երկու ձևով:

Առաջին դեպքում հանցավորը հայտնում է տեղի չունեցած հանցագործության մասին: Այս դեպքում արարքը քննարկվող հոդվածով որակելու համար էական չէ հանցանքի կատարման մեջ որոշակի անձի մատնանշելու հանգամանքը: Երկրորդ դեպքում, հանցավորը հայտնում է իրականում տեղի ունեցած հանցագործության մասին՝ մատնանշելով այնպիսի անձի, ով չի կատարել այն:

Քննարկվող հանցակազմն առկա է այն դեպքում, երբ երևակայական հանցագործության կամ հանցագործի մասին տեղեկությունները հաղորդվում են այն պետական մարմիններին, որոնք քրեական գործ հարուցելու իրավունք ունեն: Քննարկվող հանցակազմը ձևական է. հանցագործությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հասցեատերը ստանում է հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները: Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ իր տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ է: Հանցագործության շարժառիթները կարող են լինել բազմազան՝ վրեժ, խանդ և այլն: Բազմազան կարող են լինել նաև հետապնդվող նպատակները: Օրինակ՝ անմեղին քրեական պատասխանատվության ենթարկելուն հասնելը, անձին վատաբանելը և այլն:<sup>1</sup>

ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման պայմաններում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը հանցակազմի օբյեկտիվ կողմը հիմնավորված համարելու համար պետք է առնվազն ապացուցի, որ մեղադրյալի հայտնած տեղեկությունները (հանցագործության մասին) կամ ընդհանրապես չեն կատարվել, կամ էլ, եթե կա կատարված հանցանք ու մատնանշված է (հայտարարությամբ, հաղորդմամբ, դիմումով և այլ եղանակներով) կոնկրետ անձ, ապա պետք է ապացուցվի կամ հերքվի նշված անձի որևէ տեսակի առնչությունը նշված հանցագործությանը:<sup>2</sup>

Հանցագործությունն իրենից ներկայացնում է չորս պարտադիր տարրերի միասնություն, այն է՝ օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ: Նշվածներից թեկուզ մեկի բացակայությունն անձի արարքում վկայում է հանցակազմի բացակայության մասին:<sup>3</sup>

Սուտ մատնության հիմքով քրեական գործի հարուցման համար վարույթն իրականացնող մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ քրեական գործի քննության

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 9-ի ԵԱՆԴ/0051/01/12 դատավճիռը:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի թիվ ՎԲ-107/07 որոշումը



բազմակողմանի և լրիվ հետազոտման համար: ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու համար պետք է նվազագույն չափանիշներին բավարարող քննությամբ և պատշաճ ապացույցների համակցությամբ հերքվեն անձի հաղորդման կամ բացատրություն մեջ նշված ենթադրյալ հանցագործության մասին տեղեկությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

«Եթե անձը հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո, հայտնում է քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է կամ այլ կերպ ասած՝ մտացածին է ու իրականությանը չի համապատասխանում, ապա դա ինքնին բավարար չէ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Սույն մոտեցումը բխում է անմեղության կանխավարկածի պահանջներից»<sup>4</sup>:

Քրեական իրավունքի տեսության մեջ առկա այն մոտեցմամբ, որ սուտը պետք է ներառի միայն փաստական հանգամանքները, այլ ոչ թե դրանց իրավաբանական որակումը, դրա համար, եթե դիմումատու ճիշտ նկարագրում է դեպքը, դեպքի հանգամանքները, սակայն սխալ քրեաիրավական որակում է տալիս դրանց, ապա խոսք լինել չի կարող սուտ մատնության մասին: Նույն կերպ սուտ մատնությունը բացառվում է, եթե անձը գտնվել է բարեխիղճ մոլորության մեջ<sup>5</sup>:

Հասկանալի է ԵԱՆԴ/0051/01/12 քրեական գործով դատարանի այն մոտեցումը, որ «սուտ մատնության հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որ անձը հաղորդում ներկայացնելիս հաստատապես գիտակցի իր կողմից տրված հաղորդման իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը, քանի որ հակառակ պարագայում, մասնավորապես, այն դեպքում, երբ անձը ենթադրում է, որ նման հանցագործություն է տեղի ունեցել կամ կատարվել է իր կողմից մատնանշված անձի կողմից, անկախ այն հանգամանքից, թե այդ ենթադրությունը հիմնավոր է եղել, թե՛ ոչ, անձի արարքում հանցակազմը բացակայում է, քանի որ այդ պարագայում առկա չի լինում սուբյեկտիվ կողմը՝ ուղղակի դիտավորությունը: Հետևաբար, ներկայացված հաղորդման կապակցությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացման պահանջի ապահովումը բխում է նախ և առաջ վարույթն իրականացնող մարմնի շահերից, քանի որ գործի բոլոր հանգամանքների բացահայտման դեպքում կարող է ինքնըստինքյան հիմնավորվել նաև անձի արարքում սուբյեկտիվ կողմի առկայությունը՝ կատարած արարքի գիտակցված լինելն ու դրա արդյունքում առաջացող հետևանքների անխուսափելիությունը»<sup>6</sup>:

Որոշ պետությունների օրենսդրություններում դեռևս գոյություն ունեն իրավական նորմեր, որոնք նախատեսում և սահմանում են սուտ մատնության հանցակազմի համար մեղքի

<sup>4</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 9-ի ԵԱՆԴ/0051/01/12 դատավճիռը:

<sup>5</sup> Մերգեյ Մարաբյան, Սուտ մատնության դեպքերի առթիվ քրեական գործ հարուցելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում (դատական պրակտիկայի և գործող օրենսդրության վերլուծություն)/ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևանի պետ. համալս., ԵՊՀ հրատ., Երևան, 2017:


<sup>6</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 9-ի ԵԱՆԴ/0051/01/12 դատավճիռը

անզգուշությամբ դրսևորման դեպքերը<sup>7</sup>: Բացի այդ, մի շարք արտասահմանյան երկրների օրենսդիրները համեմատած Հայաստանի Հանրապետության օրենսդիրի, այլ մոտեցում են որդեգրել սուտ մատնության հանցատեսակի կարգավորման վերաբերյալ, համաձայն որի, անձի կողմից իրավասու պետական մարմիններին հայտնած տեղեկությունը տեղի ունեցած հանցագործության մասին՝ մատնանշելով այնպիսի անձի, ով չի կատարել այն, ներկայացնում է հասարակական մեծ վտանգ, համեմատած տեղի չունեցած հանցագործության մասին հաղորդում տալը<sup>8</sup>:

Այսպիսի մոտեցումն արդարացված է նրանով, որ սույն արարքով վտանգվում է անձի իրավունքները և արժանապատվությունը, ինչպես նաև արդարադատության իրականացումն է վտանգված, որովհետև կեղծ տվյալներ պարունակող հաղորդումը ստեղծում է նախադրյալներ քրեական գործի հարուցման և հետաքննության իրականացման համար՝ հակասելով իր բուն նպատակներին:

Իրավական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերի զգալի աճ:

*Սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ՝ ըստ 2014-2016թթ.:*




ՀՀ հատուկ քննչական ծառայության տրամադրած տեղեկության համաձայն, սուտ մատնությունների դեպքերի վերաբերյալ քրեական գործերի աճին էականորեն նպաստել են որոշ քաղաքացիների կողմից իրավունքի չարաշահման դեպքերը, երբ տարբեր հանցագործություններ

<sup>7</sup> Уголовный кодекс Голландии / Науч. ред. Б.В. Волженкин. 2-е изд. СПб.: Юридический центр Пресс, 2001. С.266-268; Уголовный кодекс Испании / Науч. ред. Н.Ф. Кузнецова, Ф.М. Решетников. М.:Зерцало-М, 1998. С. 142.


<sup>8</sup> Тесленко А. В. Уголовная ответственность за предоставление ложной информации, опасной для уголовного судопроизводства: сравнительно-правовой анализ законодательства Российской Федерации, стран континентальной Европы и Соединённых Штатов Америки.

կատարած անձինք իրենց առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու, նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքներն անթույլատրելի դարձնելու, հաճախ նաև իրավապահ մարմնի այս կամ այն աշխատակցից վրեժ լուծելու նպատակով, իրականությանը չհամապատասխանող բազմաթիվ դիմում-հաղորդումներ են ներկայացնում ՀՀ հատուկ քննչական ծառայություն կամ հենց դատաքննության ժամանակ հայտարարություններ անում իրենց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու մասին: ՀՀ հատուկ քննչական ծառայությունը հայտնում է, որ սուտ մատնությունների աճի միտումը հատուկ քննչական ծառայությունում պահպանվում է 2015 թվականից առ այսօր:

*ՀՀ հատուկ քննչական ծառայությունում սուտ մատնության հիմքով քննված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ՝ ըստ ստորև նշված տարիների:*



*ՀՀ հատուկ քննչական ծառայությունում սուտ մատնության հիմքով քննված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ՝ ըստ ստորև նշված ժամանակահատվածի.*




Այսպես, եթե 2015թ.-ի ամբողջ տարվա ընթացքում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ

հողվածի տարբեր մասերի հատկանիշներով հարուցված 21 քրեական գործ, ապա 2016թ.-ին դրանց թիվն ավելի քան կրկնակի աճել է՝ հասնելով 44-ի, ինչպես նաև սուտ մատնության հիմքով քննված քրեական գործերի կտրուկ աճ է արձանագրվել նաև 2017 թվականին: Սույն տարվա հունիսի 12-ի դրությամբ այս բնույթի քրեական գործերի քանակն արդեն հասել է 36-ի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում քննված 26-ի փոխարեն: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը հայտնում է նաև, որ սուտ մատնությունների փաստով հարուցված բոլոր քրեական գործերը, որպես կանոն, ավարտվում են մեղադրական եզրակացությամբ և ուղարկվում դատարան՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ընդ որում, քիչ չեն դեպքերը, երբ այս արարքում մեղադրվող անձինք դատապարտվում են ազատագրկման:

Սուտ մատնության 235 քրեական գործերից վարույթն իրականացնող մարմնի կողմից ի սկզբանե սուտ մատնության հողվածով հարուցվել է 153 քրեական գործով: Օրինակ, անձը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ երկաթե ձողով հարվածել են իր որդու գլխին և առողջությանը պատճառել ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Փաստի առթիվ հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործը հարուցվել է սուտ մատնության հիմքով:

Սուտ մատնության 235 քրեական գործերից 82-ն այն քրեական գործերն են, որոնք հարուցվել են մեկ այլ քրեական գործի շրջանակներում: Օրինակ, անձը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ սահմանափակել են իր ազատ տեղաշարժի իրավունքը՝ ապօրինի զրկել են իրեն ազատությունից: Փաստի առթիվ հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի հիմքով, այնուհետև՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթը կարճվել է և հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի հատկանիշներով: 82 քրեական գործերից հանցագործության մասին հաղորդման հիման վրա տուժող ճանաչվել է 5 անձ:

*Սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ՝ ըստ ի սկզբանե սուտ մատնության հողվածով հարուցված քրեական գործերի և մեկ այլ քրեական գործի շրջանակներում հարուցված սուտ մատնության հիմքով քրեական գործերի.*



Սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերի ուսումնասիրության արդյունքում



ձևավորվել է հետևյալ դիրքորոշումը, որ ի սկզբանե սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերը վարույթն իրականացնող մարմինների կողմից հարուցվել են որպես ճնշման գործիք՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձանց նկատմամբ ունենալով ճնշում գործադրելու նպատակ:

Սուտ մատնության հիմքով գործերի թվի աճին զգալիորեն նպաստել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի Ա. Գոյանի վերաբերյալ ԵԱԲԴ/0049/01/09 որոշումով հայտնած իրավական դիրքորոշումը, որի համաձայն, եթե վկաները, տուժողները, մեղադրյալները/ամբաստանյալները փոխում են իրենց սկզբնական ցուցմունքներն այն պատճառաբանությամբ, որ իրավասու անձինք կորզել են այդ ցուցմունքները՝ բռնության կամ այլ անօրինական ճանապարհով, ապա պետք է այդ հայտարարությունների վերաբերյալ անկախ մարմնի կողմից իրականացվի առանձին քննություն<sup>9</sup>:

Սուտ մատնության հողվածով քրեական գործի հարուցման համար մինչդասական վարույթն իրականացնող մարմնի կողմից հաղորդման կապակցությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու օրենսդրական պահանջի ապահովումը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված քրեական գործի վարույթի կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներով:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի պահանջներից է բխում, որ մինչև սուտ մատնության դեպքով քրեական գործ հարուցելու մասին որոշում ընդունելը, նախ պետք է իրավական գնահատական տրվի անձի կողմից հայտնած հանցագործության մասին հաղորդման մեջ փաստերին, իրականացվեն բոլոր անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, որոնց արդյունքում ձեռք բերված ապացույցները բավարար կլինեն հաղորդման մեջ նշված հանցագործության բացակայությունը կամ հնարավոր հանցագործությունները կոնկրետ անձի կողմից կատարված չլինելու հանգամանքը հաստատված ճանաչելու համար<sup>10</sup>:

ՀՀ օրենսդրության բացերի և իրավակիրառ պրակտիկայի արդյունքում է, որ թիվ 55104815 քրեական գործով (մայր գործ) Ա. Մամաջանյանը եղել է մեղադրյալ և միննույն ժամանակ նրա նկատմամբ հարուցվել է նոր քրեական գործ (55106115) իր կողմից հաղորդում տալուց՝ կաշառք տալու և ստանալու մասին սուտ մատնություն կատարելու դեպքով և առանձնացվել է առանձին վարույթ: Ընդ որում, երկու քրեական գործերով միաժամանակ իրականացվել է նախաքննություն, որոնցից առաջինում Ա. Մամաջանյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել մեղադրանքի ձևով (եղել է մեղադրյալ), իսկ մյուսով սկզբից կասկածանքի (խափանման միջոց է ընտրվել և հարցաքննվել է որպես կասկածյալ), այնուհետև մեղադրանքի (եղել է մեղադրյալ) ձևով<sup>11</sup>:

<sup>9</sup> Մերգեյ Մարաբյան, Սուտ մատնության դեպքերի առթիվ քրեական գործ հարուցելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում (դատական պրակտիկայի և գործող օրենսդրության վերլուծություն)/ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևանի պետ. համալս., ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ. 6

<sup>10</sup> Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հուլիսի 9-ի ԵԱՆԴ/0051/01/12 դատավճիռը:

<sup>11</sup> [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=30962247438218070](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438218070)

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նշել է, որ «նույն քրեական գործի նախաքննության ընթացքում, եթե նույն անձի կամ մեղադրյալի կողմից, բացի իրեն մեղաազրվող հանցագործություններից, բացահայտվում է առաջինի հետ չկապված այլ հանցագործության վերաբերյալ փաստ, ապա նոր քրեական գործ հարուցելու իմպերատիվ պահանջ չկա՝ այդ հարցի լուծումը պայմանավորված է կոնկրետ գործի առանձնահատկություններից: Նոր քրեական գործ հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու պահանջը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ մայր գործով բացահայտվում է այնպիսի հանցագործության դեպք, որը կապված չէ մայր գործով մեղադրյալին մեղաազրվող հանցագործության (հանցագործությունների) հետ և, որը, կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»:



Համամիտ ենք դատարանի այն կարծիքի հետ, որ «Ժամանակագրական առումով, քանի դեռ անձի կողմից հայտնած տվյալները չեն հերքվել դատավարական վերջնական որոշման կայացմամբ, որը, կապված դատավարության փուլից, կարող է լինել տարբեր տեսակի որոշում, ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3 կետերով նախատեսված արդարացնող որևէ հիմքով, անկախ նրանից, որ հաղորդում տված անձն իր ցուցմունքներում կամ բացատրություններում հայտնում է, որ սուտ տեղեկություններ է հայտնել հաղորդման մեջ, իսկ քննիչը համոզված է դրանում, օբյեկտիվորեն խոսք չի կարող լինել սուտ մատնության հանցակազմի օբյեկտի և օբյեկտիվ կողմի հատկանիշներ պարունակող դեպքի մասին, որպիսի հանգամանքը բացառում է նաև այդ դեպքի առթիվ քրեական գործ հարուցելը, այն էլ՝ առանձին վարույթ առանձնացնելով: Դատարանը գտնում է, որ եթե քրեական գործով նախաքննության ընթացքում քրեական հետապնդման մարմինը հնարավորություն ունենա նույն քրեական գործով մեղադրյալի նկատմամբ քրեական գործ և քրեական հետապնդում հարուցել ենթադրաբար սուտ մատնության դեպքով, ընդ որում՝ այն դեպքում, երբ որպես կասկածյալ կամ մեղադրյալ ցուցմունք տալիս հայտնել է, որ սուտ հաղորդում է տվել՝ առանց այդ հաղորդման կապակցությամբ հարուցված քրեական գործով վերջնական որոշման կայացման, ապա քրեական հետապնդման ենթարկվող անձը նախ՝ զրկվում է իր հայտնած տվյալների ստուգման արդյունքում կայացված ակտը վիճարկելու իրավունքից, որը կարող է իրեն պաշտպանել սուտ մատնության կասկածանքից, երկրորդ՝ անձը կարող է արդարացված մտավախություն ունենալ առ այն, որ դա իր հանդեպ հոգեբանական ճնշում է՝ մեղադրանքի հիմնավորման համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով, որպիսին, դատարանի գնահատմամբ, առկա է եղել սույն գործով: Այդ մտավախությունից դրդված՝ անձը կարող է փոխել իր ցուցմունքները մեղադրանքի կողմի համար ցանկալի եղանակով՝ անգամ քրեական հետապնդման մարմնի համապատասխան աշխատակիցների բարեխղճության պարագայում, որպիսի հանգամանքը կարող է հանգեցնել նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման: Ստացվում է, որ թեև անձն ունի լռելու, իր վերաբերյալ ցուցմունք չտալու իրավունք, սակայն, մյուս կողմից, այդ իրավունքից օգտվելը կարող է հանգեցնել սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկվելուն, որպիսի հանգամանքը պատրանքային, հոչակագրային և ձևական է դարձնում անձի՝ իր վերաբերյալ ցուցմունք չտալու, ընդհանրապես լռելու իրավունքը, եթե քրեական գործով վարույթը նախաձեռնվել է իր կողմից կատարած ենթադրյալ հանցագործության փաստի վերաբերյալ հաղորդման հիման վրա»:<sup>12</sup>

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը գործող օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ, որպիսի պայմաններում անձը հնարավորություն ունենա իրացնելու դատարանի դիմելու իր իրավունքը սուտ մատնության հողվածով որպես մեղադրյալ ներգրավելու դեպքում, իսկ արդարադատության իրականացումը հիմնված լինի օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա՝ առանց քրեական դատավարության նորմերի կամայական կիրառման:

Սուտ մատնության հիմքով քրեական գործեր հարուցելու շրջանակը 2016թ. ՀՀ օրենսդրությամբ ընդլայնվել է՝ նախատեսելով քրեական պատասխանատվություն **այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը:**

**Այսպես,** ՀՀ քրեական օրենսգրքի 154.8. հոդվածը սահմանում է քրեականա պատասխանատվության համար հետևյալ հանցակազմերը՝ այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորությամբ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ Արագածոտնի մարզի իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԼԴ2/0055/01/15 դատավճիռը: [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=30962247438218070](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438218070)



հայտարարություն) դիմումին կից ներկայացնելը և այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալը:

ՀՀ Ազգային ժողովի 02.04.2017թ. ընտրությունների ավարտից անմիջապես հետո ՀՀ դատախազությունը տարածել էր հաղորդագրություն, որի մեջ, նշվում էր. «...հանցագործություն է նաև այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 154.8-րդ հոդվածով: Քաղաքացու սահմանադրական իրավունքների անշեղ պաշտպանության, հանցագործության համար քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման եւ, միաժամանակ, հանրությանը բացառապես օբյեկտիվ եւ ստուգված տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջվել է՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ կետով նախատեսված սուբյեկտների կողմից՝ այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելով ներկայացված համապատասխան դիմումները, անկախ դրանց քննարկման արդյունքներից, ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն: Միաժամանակ, հորդորում ենք բոլոր այն անձանց, ում հայտնի են դարձել այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ՝ ներկայանալ իրավապահ մարմիններ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածով սահմանված կարգով այդ հանցագործության մասին հաղորդում տալ՝ նախազգուշացվելով սուտ մատնության վերաբերյալ քրեական պատասխանատվության մասին: Վստահեցնում ենք, որ վերը նշված օրենքով սահմանված կարգով ներկայացված յուրաքանչյուր հաղորդում լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննության առարկա կդառնա<sup>13</sup>»:

Սակայն ՀՀ-ում ընտրությունների պրակտիկան ցույց է տալիս, որ վարույթն իրականացնող մարմինները ընտրական գործընթացում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ ներկայացված հանցագործության մասին հաղորդումներին անդրադառնում են այն ժամանակ, երբ այդ խախտումներն արդեն իսկ ավարտված են լինում՝ քվեարկության ավարտից հետո և որպես կանոն, ընտրական գործընթացներում տեղի ունեցող խախտումների վերաբերյալ ներկայացված հանցագործության մասին հաղորդումների ուղղությամբ կատարված գործերի քննությամբ՝ ընտրախախտումները կանխելու, հանցագործություն կատարած անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու փոխարեն հիմնականում կայացվում է ընտրախախտման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձանց նկատմամբ ունենալով ճնշումներ գործադրելու նպատակ: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ մեջբերված հոդվածն ընդունվել և ուժի մեջ է մտել սուտ մատնության հիմքով հարուցված քրեական գործերի թվի զգալի աճմանը զուգահեռ պայմաններում:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության 154.8 հոդվածով սահմանված արարքների քրեականացումը հանգեցնում է համապատասխան մարմիններին քաղաքացիների կողմից հանցագործությունների մասին հնարավոր հաղորդումներ ներկայացնելուն խոչընդոտմանը, որը նաև հոգեբանական ճնշման ազդեցություն ունի հնարավոր խախտումների մասին ահազանգողների նկատմամբ: Այսպիսով, պետության իրավական մոտեցումը չի համապատասխանում մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական նորմերին և սկզբունքներին և քրեական իրավունքի պահանջներին: Սուտ մատնության հոդվածով հարուցված քրեական գործերի

<sup>13</sup> <https://news.am/arm/news/383176.html>



ուսումնասիրությունը և վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բացերը և խնդիրները, որոնց վրա հիմնվելով, կարող ենք եզրահանգել, որ ՀՀ քրեական դատավարության 154.8 հոդվածի կիրարկումը նույնպես վտանգված է վերը նշված իրավական խնդիրներով:

Հաշվի առնելով նաև իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ սուտ մատնության հիմքով հարուցված գործերը<sup>14</sup>, հիմնավոր են պնդումները, որը պետք է լրջորեն վերանայել սուտ մատնության հիմքով քրեական գործերի իրավական կարգավորումները, որպեսզի այն չկիրառվի որպես քրեական հետապնդման միջոց մարդու իրավունքների խախտումների, նաև կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների ահազանգերով արդյունավետ քննությանը և պայքարին:

*Մարիամ Անտոնյան,*

*ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների բաժնի  
համակարգող*

Հ. Գ. Թեմայի վերաբերյալ ամբողջական զեկույցը կհրապարակվի ավելի ուշ:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2017թ.

<sup>14</sup> <http://www.aravot.am/2016/06/21/706429/>